ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **16/02/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամ:

Բացակա էր՝ Նազիկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Եղիշե Ավետիսյանը, Անուշ Ծատուրյանը, Մարիյա Բաղդասարյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի հերթական երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
2) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի N 64-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի N 65-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
4) Աբովյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.
5) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 30-Ա որոշման մեջ

փոփոխություն կատարելու մասին.
6) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
7) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0339 կադաստրային ծածկագրով հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
8) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 217-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
9) Լիանա Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 0.19462 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
10) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0002-0002 կադաստրային ծածկագրով 1.0 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
11) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0138-0011 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին.
12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 1/14 հասցեում գտնվող հողամասը Հայկ Կարապետյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
13) Գույքը որպես նվեր ընդունելուն համաձայնություն տալու և այն Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին նվիրելու մասին.
14) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի N 44-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
15) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 218-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
17) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 7-րդ, 12-րդ հարցերը, ինչպես նաև 16-րդ հարցի հավելվածի 12-րդ և 13-րդ տողերը հանել օրակարգից:

Օրակարգը հաստատվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի Ն 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Ն 198-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելված 3-ի 7-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաների, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,

2) Հավելված 3-ի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3) Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար,

4) 2024 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաների համար :»,

3) Հավելված 3-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետում «երեք և ավելի» բառերից առաջ ավելացնել «մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ՝», բառերը,

4) Հավելված 3-ի 8-րդ կետի 4-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած,

5) Հավելված 3-ի 8-րդ կետի 6-րդ ենթակետից հանել «, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող» բառերը,

6) Հավելված 5-ի 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների պաշտպանության, մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,

7) Հավելված 5-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության

նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,
8) Հավելված 6-ի 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների պաշտպանության, մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,
9) Հավելված 6-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,
10) Հավելված 8-ի 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների պաշտպանության, մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»,
11) Հավելված 8-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրված պետական փորձագիտական եզրակացության հիման վրա նախագծում կատարվել են փոփոխություններ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ն/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար Գոռ Գալստյանի գրությունը (մուտք՝ 05.02.2024 թվականի N S-251), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի «Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում համայնքի ավագանու անդամների թեկնածուներ առաջադրելու մասին» N 64-Ա որոշման 1-ին կետում «անդամներ Վահե Հարությունյանին և Գոռ Գալստյանին» բառերը փոխարինել «անդամ Վահե

Հարությունյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողն առաջարկեց օրակարգի նախագծի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար Գոռ Գալստյանի գրությունը (մուտք՝ 05.02.2024 թվականի N S-251), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. «Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի «Աբովյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների անդամներին հաստատելու մասին» N 65-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«1. Հաստատել Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամներին՝
1) Վահե Արտակի Հարությունյան - Աբովյան համայնքի ավագանու անդամ,
2) Աննա Խաչիկի Զոբանյան- Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետ,
3) Ժաննա Գառնիկի Զեյնալյան - համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմնի ներկայացուցիչ,
4) Ռուբեն Մառլենի Զաքարյան – ակտիվ բնակիչ,
5) Մարինե Վաղինակի Մելքոնյան - ակտիվ բնակիչ,
6) Կարեն Գեղամի Հովսեփյան - շահագրգիռ անձ,
7) Ելենա Հովհաննեսի Բաղալյան - ակտիվ բնակիչ,
8) Տաթևիկ Ալբերտի Սիմոնյան- ակտիվ բնակիչ,
9) Աննա Լյուդվիգի Շահնազարյան- ակտիվ բնակիչ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկում ծավալվեց Աբովյան քաղաքի Էդ. Ավագյան փողոցի ասֆալտապատումը մեկ այլ փողոցով փոխարինելու վերաբերյալ: Պատասխանվեց, որ տվյալ պահին առաջարկը չի կարող քննարկվել, քանի որ այդ փողոցի համար արդեն իսկ ներկայացված է ասֆալտապատման սուբվենցիոն հայտ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Նշվեց նաև, որ նման առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել սուբվենցիոն հայտերի քննարկման և հանրային լսումների ժամանակ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի «Աբովյան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» N 30-Ա որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «տնօրենը» բառը փոխարինել «մասնագիտական թիմի ղեկավարը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 02-ի N Ք-675), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 57-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (հողամասերի, այլ անշարժ և շարժական գույքի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Արթուր Մովսիսյան - Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի անդամ՝ աճուրդավար,

2) Արմեն Քոսակյան - ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,

3) Ռազմիկ Արզումանյան - ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,

4) Մերուժան Մելիքսեթյան - համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,

5) Արսեն Հարությունյան - համայնքի ղեկավարի խորհրդական՝ հանձնաժողովի անդամ,

6) Նունե Բալիշյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ՝ հանձնաժողովի անդամ,

7) Տաթևիկ Սարոյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ հանձնաժողովի անդամ՝ արձանագրող:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Պ.Ցուգունյանը նշեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը գրավոր առաջարկություն կներկայացնի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողովում անդամ ընդգրկելու վերաբերյալ:

Առաջարկն ընդունվեց ի գիտություն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 75-րդ տողից հետո լրացնել նոր՝ 76-116-րդ տողերով.

76	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան թիվ 4/501 հողամաս	19,8	07-002-0036-0346	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	150.0
77	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 53/2 հողամաս	21,9	07-002-0039-1803	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	235.0
78	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամաս 14/3 հողամաս	256,8	07-002-0032-0074	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	1760.0
79	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջանի 5-րդ թաղամաս 150 հողամաս	1000,0	07-002-0025-0238	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	6840.0
80	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 31	100,7	07-002-0116-0454	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	690.0
81	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 3/8 հողամաս	2500,0	07-002-0103-0220	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	11110.0
82	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 14/9 հողամաս	1261,3	07-002-0103-0229	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	5605.0
83	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 14/7 հողամաս	625,0	07-002-0103-0228	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	2780.0
84	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Տարտուի փողոց 1/7 հողամաս	20,0	07-002-0082-0475	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	330.0

85	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ինտերնացիոնալի փողոց 5/1 հողամաս	30,0	07-002-0075-0079	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	490.0
86	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Բարեկամության փողոց 3/9 հողամաս	69,8	07-002-0070-0491	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1130.0
87	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ռոսիայի փողոց 4/14 հողամաս	13,2	07-002-0050-0341	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	215.0
88	Համայնք Աբովյան, ք. Աբովյան Դարանի փողոց 4/13 հողամաս	20,0	07-002-0086-0494	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	215.0
89	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց 7/4 հողամաս	76,7	07-002-0090-0164	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	810.0
90	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Գեղարդի փողոց 5/20 հողամաս	58,8	07-002-0086-0478	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	620.0
91	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Գառնու փողոց 10/12	52,5	07-002-0082-0468	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	555.0
92	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սևանի փողոց 2/14 հողամաս	110,1	07-002-0049-0815	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1800.0
93	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 31/1 հողամաս	19,4	07-002-0065-0175	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	315.0
94	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 2-րդ թաղ., թիվ 40 հողամաս	510,0	07-002-036-244	բնակավայրերի	տնամերձ	3500.0
95	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի 1-ին թաղամաս 10/1 հողամաս	346,8	07-002-0036-0328	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2380.0
96	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 113/1 հողամաս	5,3	07-002-0039-1695	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	110.0
97	Համայնք Աբովյան, գ. Առինջ Ա թաղամաս 4-րդ փողոց 14/3 հողամաս	1498,7	07-011-0051-0021	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	15800.0
98	Համայնք Աբովյան, գ. Կաթնաղբյուր	2187,5	07-034-0127-0034	գյուղատնտեսական	այլ հողատեսք	1500.0
99	Համայնք Աբովյան, գ. Արամուս	16600,0	07-013-0138-0011	գյուղատնտեսական	վարելահող	3000.0
100	Համայնք Աբովյան, գ. Պտղնի	4263,8	07-054-0308-0173	գյուղատնտեսական	այլ հողատեսք	1500.0
101	Համայնք Աբովյան, գ. Պտղնի	1637,7	07-054-0343-0012	գյուղատնտեսական	այլ հողատեսք	1000.0

102	Համայնք Աբովյան, գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածքի 22-րդ թաղամաս 3/1	299,1	07-054-0104-0014	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1330.0
103	Համայնք Աբովյան, գ. Բալահովիտ Ծաղկունք թաղամասի 2-րդ փողոց 50/1	536,0	07-018-0040-0064	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3670.0
104	Համայնք Աբովյան, գ. Բալահովիտ 1-ին փողոց 23/1 հողամաս	94,7	07-018-0003-0019	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	650.0
105	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 3/8 հողամաս	2500,0	07-002-0103-0220	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	11110.0
106	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 24 հողամաս	1000,0	07-043-128-193	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
107	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 16 հողամաս	1000,0	07-043-128-189	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
108	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 18 հողամաս	1000,0	07-043-128-190	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
109	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 20 հողամաս	1000,0	07-043-128-191	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
110	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 22 հողամաս	1000,0	07-043-128-192	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
111	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի 16 փողոց թիվ 26 հողամաս	1000,0	07-043-128-194	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2890.0
112	Համայնք Աբովյան, գ. Կամարիս	13647,8	07-035-0144-0014	գյուղատնտեսական	վարելահող, այլ հողատեսք	1300.0
113	Համայնք Աբովյան, գ. Կամարիս	15539,7	07-035-0160-0032	գյուղատնտեսական	այլ հողատեսք	1500.0
114	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան թիվ 9/76 հողամաս	19,8	07-002-036-059	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	150.0
115	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան թիվ 9/75 հողամաս	19,8	07-002-036-058	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	150.0
116	Համայնք Աբովյան, գ. Արամուս	7865,2	07-013-0139-0045	գյուղատնտեսական	վարելահող	2500.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կրկին քննարկում ծավալվեց հողամասերի օտարման մեկնարկային գների վերաբերյալ: Մասնավորաբար զեկուցողին հարց տրվեց օտարման մեկնարկային գների որոշարկման վերաբերյալ, որին ի պատասխան զեկուցողը տվեց սպառիչ պատասխան:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-3 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.19462 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի, հաշվի առնելով Լիանա Մկրտչյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 31-ի N Ք-5470 և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 26-ի N 1/փ-39 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Լիանա Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի մայիսի 31-ի N 31052023-07-0128 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-035-0161-0066) Աբովյան համայնքի Կամարիս գյուղում գտնվող 0.19462 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (արոտավայր, վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:
2. Լիանա Մկրտչյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 3 654 380 (երեք միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր ութսուն) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիանա Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0002-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.0 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Արմեն Զալիբեկյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի N Ք-7692) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 26-ի N 8 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Արմեն, Արամ և Քնարիկ Զալիբեկյաններին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 07-ի N 07042023-07-0133 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0002-0002 կադաստրային ծածկագրով 1.0 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0138-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասը Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար և չի համարվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս, հաշվի

առնելով Արտակ Առաքելյանի լիազորած անձ Նարեկ Առաքելյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի N Ք-7719), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 01-ի N 01022024-07-0109 վկայական) Արամուս գյուղում գտնվող 07-013-0138-0011 կադաստրային ծածկագրով 1.66 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Արտակ Առաքելյանին (հիմք՝ 2011 թվականի մայիսի 03-ի N 0137095 վարձակալության իրավունքի գրանցման վկայական):
2. Արտակ Առաքելյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 2 247 700 (երկու միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր) դրամ՝ հողամասի գինը.
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արտակ Առաքելյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվա հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Տ. Գեղամյանը նշեց, որ ներկայացվող նախագծի և օրակարգի նախագծի 1-ին կետի 8-րդ ենթակետով ներկայացված որոշման նախագծի 99-րդ տողում առկա է կրկնություն: Որոշվեց վերոնշյալ հարցը հանել օրակարգից՝ տեխնիկական վրիպակի պատճառով:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել-26

Որոշումը չի ընդունվել.

Լսեցին

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, հիմք ընդունելով գույքի սեփականատերերի լիազորած անձ Արթուր Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 05-ի N Ք-741), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի 2023 թվականի հուլիս 04-ի N 01/15/3466-2023 (մուտք՝ 2023 թվականի հուլիսի 04-ի N Պ-1508) և 2024 թվականի փետրվարի 09-ի N 02.3/15/642-2024 (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 09-ի N Պ-307) գրությունները, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Տալ համաձայնություն 9 786 200 (ինը միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր) դրամ գնահատված արժեքով (հիմք՝ «ՖԻՆԼՈՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հունվարի 21-ի

կազմված N ՇՀ-24-01-001 գնահատման հաշվետվություն) որպես նվեր ընդունելու Հայկ Կեսոյանին, Լիա Մանուկյանին, Համլետ Մկրտչյանին, Վահե Խաչատրյանին, Արևիկ Խեչոյանին, Եփրեմ Պողոսյանին, Գևորգ Ստեփանյանին, Վահե Գուտներյանին, Կարինե Սարգսյանին, Կարեն Մելքոնյանին, Դավիթ Մելքոնյանին, Գարեգին Ավետիսյանին, Վահագն Ենոքյանին, Արաս Օզբիլիզին, Նարինե Գրիգորյանին, Լև Ազատխանյանին, Արա Այվազյանին, Գարիկ Վիրաբյանին, Աննա Փաշինյանին, Անդրանիկ Հունանյանին, Բորիս Օսիպյանին, Հովհաննես Ախոյանին, Արմեն Ստեփանյանին, Աննա Բակլաչյանին, Վարդան Սարգսյանին, Արման Գրիգորյանին, Սեյրան Կեսոյանին պատկանող (հիմք՝ 2023 թվականի մայիսի 02-ին տրված թիվ 11082023-07-0033 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող գույքը՝ 1848.9 գծմ, d=75 մմ տվյալներով արտաքին ջրագիծ, 6.9 քմ պոմպակայան:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի կնքման գործընթացն ավարտելուց հետո նշված գույքը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի:
3. Աբովյան համայնքի ղեկավարին՝ ապահովել գործարքների կնքման գործընթացը և դրանցից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 44-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 02-ի N Ք-673), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի «Աբովյանի համայնքային մարզահամալիրը «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 44-Ա որոշման 2-րդ կետում կետում «2 (երկու) տարվա» բառերը փոխարինել «6 (վեց) տարվա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկում ծավալվեց Աբովյանի համայնքային մարզահամալիրը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու ժամկետի փոփոխման վերաբերյալ: Մասնավորաբար զեկուցողը ներկայացրեց, որ նախագծով առաջարկվող ժամկետից՝

6 տարի, իրականում ավելանում է 2 տարի՝ առանձնացնելով նաև հարցի առանձնահատկությունը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 218-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 218-Ա որոշման հավելվածը լրացնել նոր՝ 3-4-րդ տողերով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-25 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2024 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար

առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Վ. Բաբաջանյանն անդրադարձավ նախորդ նստաշրջանի ընթացքում նիստերից ավագանու անդամների բացակայություններին և ներկայացրեց ամփոփ տեղեկանք: Միաժամանակ Վ. Բաբաջանյանն ավագանու անդամներին կրկին հիշեցրեց, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով վերջիններս պարտավոր են մինչև ընթացիկ տարվա մայիսի 31-ը ներկայացնել եկամուտների հայտարարագիր՝ պատրաստակամություն հայտնելով վերջիններիս տրամադրել համապատասխան աջակցություն:

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի մարտի 14-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Ավագանու անդամներ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____